





Գնահատանք

# Բացթողումը լրացնելու ժամանակն է...



### Այոնիքի մարզպետ Վահե Հակոբյանը՝ գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի հիշատակին

**Ա**յոնյաց աշխարհի մերօրյա եւ ոչ վաղ անցյալի հոգեւոր-մշակութային կյանքին հայացք գցելիս անհնար է այդ ամենում չնկատել Ռոբերտ Կամոյան գեղանկարչի ինքնատիպ արվեստը, նրա թողած հարուստ ժառանգությունն ու լուսավոր հետքը, որոնք այսօր, համոզված եմ՝ նաեւ ապագայում, խորը ոգեշնչման աղբյուր են հանդիսանալու մեր գալիք ստեղծագործ սերունդների համար:

Մեծապես ափսոսում եմ, որ անձնապես ծանոթ չեմ եղել Ռոբերտ Կամոյանին, բայց նաեւ ուրախ եմ, որ նրա թողած հետազոծիմ՝ մեծարժեք կտավներին, բովանդակ հարցազրույցներին, հողվածներին, նրա մասին ակնարկներին ծանոթանալով, կարող եմ փաստել շատերի կողմից հնչեցվող գնահատականն այն մասին, որ Ռոբերտ Կամոյանը հանդիսանում է Հայաստանի տաղանդավոր արվեստագետներից մեկը:

Պատահական չէ, որ չունենալով կոչումներ, պարգևներ, չլինելով ստեղծագործական որևէ միության ու ընկերակցության անդամ, նա արժանացել էր թերևս յուրաքանչյուր արվեստագետի համար ամենաբարձր կոչմանը՝ ժողովրդի գնահատանքին ու մաքուր սիրուն: Բավական է միայն հիշենք, որ իր ժամանակակիցները նրան Ուսուցիչ էին անվանում:

Յավոք, Ռոբերտ Կամոյանի 80-ամյակը նշում ենք առանց իրեն: Բայց մեզ համար մեծ սփոփանք է, որ ապրում ենք նրա կերտած կամոյանական աշխարհում՝ յուրօրինակ փիլիսոփայությամբ, սեփական ոճով, զերծ ավելորդ ազդեցություններից ու համեմատված պարզությամբ: Թեկուզեւ հպանցիկ ծանոթ լինելով Ռոբերտ Կամոյանի ձեռագրին, հնարավոր չէ չզգալ նրա սերը Այոնյաց լեռնաշխարհի նկատմամբ, ներդաշնակությունը՝ ազգային արվեստի հետ:

Գիշտ են նկատում Ռոբերտ Կամոյանի արվեստը գնահատողները, երբ նշում են, որ չնայած նրա գրույցը Բարձրյալի հետ էր, բայց այն երկրային թեմաներով էր: Նրա կտավների կենտրոնում իրական կյանքն էր, հասարակ մարդն ու բնությունը:

Նր: Ջարմանալի չէ, որ նա ոչ միայն առաջ էր նայում, այլ իր ստեղծագործություններով մարդուն էր առաջնորդում դեպի կատարելություն ու մաքրություն:

Ռոբերտ Կամոյանին հաջողվել է կերտել հակադրությունների ինքնատիպ ներդաշնակություն: Նրա արվեստի անբաժան մասն է մշտական կռիվը հակադիր բեւեռների միջև. կռիվ, որում միշտ հաղթել է լույսը, բարին: Կարծում եմ՝ նման խորը աշխարհայացք ու պատկերացումներ ունենալու պատճառներից մեկն էլ այն է, որ Կամոյանը, սեփականից ու ազգայինից զատ, հրաշալիորեն նաեւ տիրապետում էր ինչպես համաշխարհային արվեստին, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ արտացոլված համամարդկային արժեքներին:

Այսօր հայարտությամբ ենք փաստում, որ Ռոբերտ Կամոյանն իր Այոնյաց աշխարհի անխոնջ նվիրյալն էր: Տաղանդավոր նկարչի վրձնով են ներկայացված մեր մեծերից շատերի փառահեղ կերպարները («Այոնյաց երկիր» թերթի պատվերով), որոնց թվում են՝ Սուրբ Գրիգոր Տաթևացին, Ակսել Բակունցը, Համո Սահյանը, Մելիք Հայկազն Երկրորդը, Նիկողայոս Ադունցն ու ուրիշներ:

Մեծ վարպետությամբ Ռոբերտ Կամոյանը գեղարվեստորեն վերարտադրել է մեր լեռնաշխարհի մի քանի ուշագրավ իրադարձություններ՝ Վահանավանքի նավակատիքը 1100 տարի առաջ, Հաբանդի (Չագեծորի) բերդի կառուցումը Հայկ Նահապետի սերունդների կողմից... Բազմաթիվ թատերական ներկայացումների նկարչական ձևավորումներից, բնանկարներից, հավաքածուներից, նատյուրմորտներից, դիմանկարներից ու գրաֆիկական աշխատանքներից զատ Կամոյանը նաեւ իր ուժերը փորձեց որմնանկարչության ասպարեզում՝ Գեղամուշի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու խորանի պատին պատկերելով սրբանկարների շարք, որոնցում Հովհաննես Մկրտիչն առաջալններին ու հրեշտակներին ուղղորդում է մարդկության փրկության խորհրդանշի՝ Հիսուս Քրիստոսի կողմը:

Աչքներին առաջ ունենալով այս ամենը՝ Ռոբերտ Կամոյանի 80-ամյակը մեզ համար առիթ է խորհրդածելու նրա ժառանգությունը պահպանելու եւ հանրությանն առավել ճանաչելի դարձնելու կարեւորություն շուրջ: Տեղյակ եմ, որ նրա արվեստանոցում են մոտ 300 յուղաներկ ու շուրջ երկու հազարից ավելի գրաֆիկական (գծանկար) կտավներ: Տեղյակ եմ նաեւ պահպանության ոչ պատշաճ պայմանների մասին: Միանշանակ է, որ համայնքային իշխանությունն իր հնարավորությունների սահմաններում պետք է հոգ տանի պայմանների բարելավման ուղղությամբ՝ միաժամանակ կարեւորելով այն հանգամանքը, որ Կամոյանի ստեղծագործությունները պետք է ցուցադրվեն ոչ միայն մարզկենտրոնում կամ մարզի այլ քաղաքներում, այլ նաեւ մայրաքաղաքում: Գերակայություններից պետք է լինի նաեւ նրա ստեղծագործությունների ամբողջական հավաքածուի ստեղծումը:

Եթե ինչ-ինչ համազանցների բերումով Ռոբերտ Կամոյանի անձն ու նրա ժառանգությունը պատշաճ գնահատականի չեն արժանացել, ապա հիմա այդ բացթողումը լրացնելու ժամանակն է: 21<sup>րդ</sup> որ Ռոբերտ Կամոյան արվեստագետն այն տեսակն է, ում ժառանգությունը դեռեսս խորքային ու պատշաճ ուսումնասիրության կարիք ունի:

# Կյանքի ուղին

**Ռ**ոբերտ Կամոյան. ծնվել է 1937թ. հունվարի 6-ին Կապանում: Հայրը՝ Վարդան Կամոյանը, Լուռու էր (ծնվել է Ալավերդիում), ուր նրա նախնիները եկել էին Ազուխից (պապը՝ Արշակը, որը ժամանակ բնակվել է հնձորեսկում): Ռուսաստանում (Սվերդլովսկում) լեռնային ինժեների բարձրագույն կրթություն ստացած Վարդան Կամոյանը Կապան է եկել 1932 թվականին՝ գործուղմամբ՝ տեղի հանքարդյունաբերական ձեռնարկությունում աշխատելու համար: Կապանում էլ ընտանիք է ձևավորել եւ ապրել մինչեւ կյանքի վերջը: Մայրը՝ Վարդիթեր Կամոյանը, Վաչագան գյուղից էր՝ Օրբելյանների տոհմից (Ռոբերտ Կամոյանի վկայությամբ՝ հայտնի իշխանական տոհմից):

Ռոբերտ Կամոյանը միջնակարգ կրթությունը ստացել է Կապանի N3 (ռուսական) դպրոցում: Այնուհետեւ մեկնել է Լեւոնգրադ եւ ընդունվել տեղի Ի. Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիան: 1954-55թթ. այնտեղ սովորելուց հետո, հոր առողջական վիճակով մտահոգ, երկրորդ կուրսից ուսումն ընդհատել է, վերադարձել Կապան եւ աշխատանքի անցել մսի կոմբինատի սառնարանային տնտեսությունում՝ կոմպրեսորային արտադրամասի մեքենավարի օգնական, ապա՝ Բարաբաթումի պղնձահանքում՝ բանվոր:

1958 թվականին, երբ արդեն վերականգնվել էր հոր առողջությունը, մեկնել է Երեւան, ընդունվել գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետ, որը, ռեժիսուրա մասնագիտությամբ, ավարտել է 1963 թվականին: Միաժամանակ սովորել է նույն ինստիտուտի գունանկարչական ֆակուլտետում, որն ավարտել է 1964-ին՝ նկարիչ-գունանկարչի ու մանկավարժի մասնագիտությամբ: Գեղարվեստաթատերական ինստիտուտում ուսանել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Արմեն Գուլակյանի, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Եղարադ Իսաբեկյանի եւ ճանաչված այլ նկարիչների, դերասանների ու ռեժիսորների ղեկավարությամբ:

1965թ. աշխատել է Մեղրու շրջանի Ազարակ քաղաքի մշակույթի տան տնօրեն: 1966-67թթ. աշխատել է Երեւանի Հ.Թումանյանի անվան պետական տիկնիկային եւ Կ.Ստանիսլավսկու անվան պետական թատրոններում՝ ռեժիսոր, նկարիչ:

1967-98թթ. աշխատել է Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ բեմադրող ռեժիսոր, նկարիչ, գլխավոր նկարիչ: Չուզահեռաբար բեմական ձեւավորումներ է կատարել Գյումրիի, Գորիսի թատրոններում:

1964 թվականից մասնակցել է հանրապետական եւ համամիութենական ցուցահանդեսների: Անհատական ցուցահանդեսներ է բացել Լեւոնգրադում, Ռիգայում, Յուրմալայում, Վիլնյուսում, Երեւանում, Կապանում:

1971 թվականից գործում է նրա հիմնադրած նկարչական ստուդիան, որտեղ տարիների ընթացքում ուսանել են հարյուրից ավելի պատանիներ եւ աղջիկներ:

Ռոբերտ Կամոյանի ստեղծագործությունների մի մասը գտնվում է Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության, Լիտվայի, Լատվիայի եւ Եստոնիայի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում:

Ռոբերտ Կամոյանն ամուսնացել է 1968թ., ունի երկու զավակ եւ երեք թոռ: Կինը՝ Սվետլանա Օրբելյանը, ռուսաց լեզվի ուսուցչուհի է, աշխատել է Կապանի հանրակրթական դպրոցներում:

Ռոբերտ Կամոյան արվեստագետն ամբողջ կյանքը նվիրել ու շարունակում է

նվիրել սիրած գործին, բայց դա չի նշանակում անենեւին, որ մոռացության է մատնել ընտանիքը, որդիներին՝ Լեւոնին ու Դավթին: Նա ոչ միայն սիրված հայր է, այլ նաեւ սիրված պապիկ: Տաղանդավոր արվեստագետը թոռների հետ ամռանը՝ Վաչագան գյուղում, հաճելի ու անմոռանալի օրեր է անցկացնում:

Արվեստագետի որդիները, հետեւելով



Ինքնանկար, յուղաներկ 140x200



Ինքնանկար, յուղաներկ 40x60



Ինքնանկար, յուղաներկ 50x100

հոր օրինակին, իրենց նույնպես նվիրել են նկարչությանը եւ փորձում են հոր ստեղծած մեծ հարստությանը հավելել իրենցը: Ավագ որդին՝ Լեւոնը, ավարտելով Երեւանի գեղարվեստի ակադեմիան, շարունակում է հոր ուղին, բայց արդեն մայրաքաղաք Երեւանում, իսկ փոքր որդին աշխատում է ստեղծագործում է Ռուսաստանի Դաշնությունում: Կամոյանի խոսքով՝ որդիները տաղանդավոր են, բայց եւ ծայրահեղ համեստ բնավորությամբ:

Վաստակաշատ արվեստագետի ստեղծագործական տեսնիկայում գերակշռում են յուղաներկը, ջրաներկը, գուաշը, տուշը, մատիտը, ածուխը, ժանրային առունով՝ բնանկարը, դիմանկարը, կոմպոզիցիան: Նրա ստեղծագործությունների գլխավոր լեյտմոտիվը մարդն է՝ իր հոգեբով, մտահոգություններով:

Այդ բոլորով հանդերձ՝ Ռոբերտ Կամոյանը դեռեսս չունի ստեղծագործությունների ամբողջական կատալոգ, որի ստեղծումն անհրաժեշտ է եւ հրատապ: Օրախնդիր է նաեւ նրա հազարից ավելի գեղանկարների պահպանության հարցը, որ հիմա գտնվում են գեղանկարչի արվեստանոցում:

«Այոնյաց երկիր»  
31 հունվարի 2013թ.  
N2 (275)

Նամակի  
հովանավորներ



«Չանգեզուրի պղնձամուկիթ-դենային կոմբինատ» ՓԲ ընկերություն (գլխավոր տնօրեն՝ Սիեր Պոլոսկով)



«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերություն (գլխավոր տնօրեն՝ Դմիտրի Ուշկով)

# Դավիթ Կամոյան. «Յայրս ո՛չ նախկինում, ո՛չ էլ ներկայումս ըստ արժանվույն չի գնահատվում»

Կապանցի նշանավոր գեղանկարիչ, ցավոք, հանրության եւ նեղ մասնագիտական շրջանակներում ըստ արժանվույն չգնահատված Ռոբերտ Կամոյանի 80-ամյակի առթիվ «Սյունյաց երկիր» թերթի հատուկ թողարկման շրջանակներում, մասնավորապես նրա թողած ժառանգության պահպանման մասին, գրուցեցինք գեղանկարչի որդու՝ Դավիթ Կամոյանի հետ:



ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### մոյանի ժառանգությունը:

– Կամոյանի արվեստանոցում են գտնվում բոլոր կտավները՝ մոտ 300 յուղաներկ եւ 2000-2500 գրաֆիկա (գծանկար): Յամայատախան պայմաններ փորձում ենք ապահովել դրանց չփչանալու համար, բայց դրանք պետք է մշտական հանգրվան գտնեն: Ցավոք, նվիրաբերված կամ վաճառված շատ կտավների լուսանկարները չկան: Մի ժամանակ ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում հինգ կտավ մշտական ցուցադրվում էր, ներկայումս նույնպես մնացած չկա: «Անդրանիկ գորավարի մուտքը Պղնձե քաղաք» կտավը ցանկանում էին երեսնամյա թանգարաններից մեկում ցուցադրել, բայց այդ հարցն այդպես էլ լուծում չստացավ: Եթե առաջարկներ լինեն, շատ լավ աշխատանքներ կան, որոնք սիրով կնվիրաբերեն որեւիցե թանգարանի:

### – Իսկ ի՞նչ եղան Կամոյանի տուն-թանգարան կառուցելու երբեմնի խոսակցությունները:

– Այդպես էլ իրականություն չդարձան: Այնպես չէ, որ ես ասում եմ Կամոյանի տուն-թանգարան կառուցեն միայն, կարելի է այդ հարցը նաեւ այլ կերպ լուծել. թանգարան ստեղծել, որտեղ կներկայացվեն կապանցի նշանավոր գեղանկարիչների աշխատանքները: Խնդիրն այն է, որ քաղաքում թեկուզ ժամանակակից որոշ ցուցադրություն կազմակերպելու համար ցուցասրահի համապատասխան տարածք չկա: Ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղի շենքն էլ վերանորոգման կարիք ունի: Մասնավոր մեծ գործեր ցուցադրելու համար գրեթե ոչ մի տարածքում պայմաններ չկան:

### – Իսկ պատկան մարմիններին դիմե՞լ եք այդ հարցերով:

– Ես այն կարծիքին չեմ, որ պետք է գնաս ասես՝ արի քո քաղաքի երեւելի մարդկանց սիրիր, գնահատիր: Դրանում, նախեւառաջ, իրենք պետք է շահագրգռված լինեն, քանի որ նաեւ մշակութային արժեքներով են քաղաքը ճանաչում:

### – 80-ամյակին նվիրված ի՞նչ միջոցառում եք նախատեսում անցկացնել:

– «Կապան մոլ»-ի սրահներից մեկում հունվարի 18-ին տեղի կունենան Կամոյանի կտավների ցուցահանդես՝ մեկ շաբաթ տևողությամբ, որին կներկայացնենք 80 գործ՝ 50 յուղաներկ, 30 գրաֆիկա: ՌԴ-ի Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Կրասնոդար քաղաքներում նույնպես ցուցահանդես կլինի, արդեն մոտ 80 կտավ տեղափոխել են՝ 30 յուղաներկ, 50 գրաֆիկա: Արտասահմանյան որոշ քաղաքներում ցուցահանդեսներ կազմակերպելու առաջարկներ կան, բայց դրանք համար նյութական մեծ միջոցներ են հարկավոր՝ տեղափոխման եւ մի շարք այլ կազմակերպական խնդիրներ լուծելու համար:

### – Ձեր կարծիքով՝ ըստ արժանվույն է գնահատվում հայրիկի արվեստը:

– Գնահատվում է, բայց ոչ ըստ արժանվույն: Ցավով պիտի նշեն, որ ինչպես Ռոբերտ Կամոյանին, այնպես էլ մի շարք այլ



նկարիչների, արտասահմանում ավելի բարձր են գնահատում:

### – Կամոյանն այդպես էլ նկարիչների միության անդամ չդարձավ, չնայած որ շատ-շատերից բարձր է իր ստեղծած արժեքներով: Նա կոչումներ էլ չունեցավ, ինչո՞ւ էր դա բացատրում:

– Դե նկարիչը չպետք է գնա ասի՝ ինձ կոչումներ տվեք, պարզեների արժանացրեք: Յուրաքանչյուր արվեստագետի արժանի գնահատական պետք է տա միայն ու միայն ժողովուրդը: Բնավ նշանակություն չունի, թե դու նկարիչների միության անդամ ես կամ ոչ, կարելու արվեստի բնագավառում արժեքավոր գործեր թողնելն է: Ձեր թերթին տված հարցազրույցում ես այսպես էր պատասխանել հարցին. «Ոչ մի կոչում չունեմ, Կապանում ո՞նց հնարավոր է, որ կոչում ստանամ: Ո՞վ իմ մասին գիտի, որ կոչման արժանացնեն: Կապանում ո՞վ է հետաքրքրվում Կամոյանով: Ոչ մի բան չեմ ուզում, ինձ հանգիստ թողնեն, իմ գործով բաղվեն»: Այսօր նկարչությունը նույնպես գրգռես է, ով փող ունի, նա է նկարիչ, բայց, համոզված եմ, ժամանակի ընթացքում իսկական նկարիչներն իրենց ուրույն տեղը կգտնեն, այդ թվում նաեւ՝ Ռոբերտ Կամոյանը:

### – Ժամանակին նա տարբեր քաղաքներից հետաքրքիր առաջարկներ է ստացել, որոնք ավելի մեծ հեռանկար էին խոստանում:

– Ռիգայից, Սանկտ-Պետերբուրգից ժամանակին առաջարկել են տեղափոխվել այնտեղ՝ գործունեություն ծավալելու համար, բայց նա հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ իր ներշնչման աղբյուրը հայրենի քաղաքում է, իսկ այնտեղ ամեն ինչ խորթ է իրեն:

### – Կամոյանը հաճախ էր սիրում կրկնել, որ մահվանից հետո պարզ կլինի՝ իր գործերը հաջողվե՞լ են, թե՞ ոչ:

– Ինձ թվում է՝ նա շատ վաղուց է կայացել եւ իր մնայուն տեղը գրավել թե՛ ազգային, թե՛ համաշխարհային գեղանկարչության պատմության մեջ: Այդ խոսքերով նա ավելի շատ ուզում էր շեշտել մնայուն կամ հավերժական արժեքներ ստեղծելու գաղափարը:

### – Յարգազրույցներից մեկում նա նշել էր, որ երազում է գլուխգործոց ստեղծել: Յարգույն՞ը նրան երազանքն իրականություն դարձնել:

– Ինձ թվում է՝ նա իր ստեղծած որեւէ կտավ այդպես էլ գլուխգործոց չհամարեց: Իմ կարծիքով՝ նրա բոլոր գործերն էլ յուրովի գլուխգործոց են: Իսկ թե որն է նրա երազած գլուխգործոցը, կարծում եմ, արվեստասեր հասարակությունը, հանրությունը ժամանակի ընթացքում կորոշեն:

### – Արտասահմանյան որոշ քաղաքներում ունեցած ցուցահանդեսներից նա վերադարձել է առանց կտավների: Ինչո՞ւ:

– Յիշում եմ՝ մենք փոքր էինք, երբ մորս հետ միասին Սերժաբլիկայում ունեցած ցուցահանդեսից վերադարձավ՝ մեզ համար շատ խաղալիքներ բերելով: ԽՍՀՄ մի շարք քաղաքների ցուցահանդեսներից հետո բոլոր կտավները կամ վաճառվել էին, կամ նվիրել էր ընկերներին ու մտերիներին: Բացի դրանից՝ Յուրմալայում մասնակցել էր մրցույթի եւ մոտ 800 գեղանկարիչներից նա էր արժանացել առաջին մրցանակի:

### – Յնարավոր է, որ հասնենք մի հանգրվանի, որ բոլոր կտավները վաճառվեն:

– Իհարկե ոչ: Ռոբերտ Կամոյանի արվեստանոցում կան մեծաթեք կտավներ, որոնք ոչ մի դեպքում չեն վաճառի, քանի որ նրանք միայն ու միայն թանգարանային մոնումենտներ են:

### – Արվեստաբանները որքանով են հետաքրքրվում նրա արվեստով:

– Առանձնապես հետաքրքրվածություն համեմայն դեպք ներկայումս եւ նախկինում չի զգացվել: Նախ՝ որովհետեւ ինքն էլ առանձնապես տեղ չի տվել դրան: Ժամանակին 70-ամյակին նվիրված գեղանկարների ալբոմ, բուկետ են տպագրել նրա արվեստի մասին, գիրք հրատարակելու մտադրություն էլ կար, բայց այդպես էլ իրականություն չդարձավ: Ասում էր. «Ինչ նկարում եմ, հոգուս խորքից է բխում, լավ կանեն, թե վատ, ժողովուրդը թող որոշի: Աստված այդ ձևերն ինձ պարզեց է, իսկ իմ գործերը հաջողվել են, թե ոչ, իմ մահից հետո կերեւա, թե ինչ են թողել: Յիմա դա ոչ մեկը չի կարող որոշել»:

### – Մարդու ամենամեծ արժանիքը նա կիսվել էր համարում: Ի՞նչ է նկատի ունեցել:

– Յայրս կոչ էր անում կիսվել գիտելիքով, փորձով, ունեցվածքով: Իսկ կտավներից բաժանվում էր սիրով, առանց ակոստանքի, ոչ մեկի համար ախ չէր քաշում. սա եւս ունեցածը կիսելու նրա լավագույն հատկանիշի մասին է վկայում:

### – Յաճախ էր քննադատում ձեզ:

– Յատկապես ծուլության համար միշտ դիտողություն էր անում, ասում էր՝ ընդունակ ես, ճաշակով, կարող ես ավելին անել: Ցավում եմ, որ աշխատանքի բերումով երկար ժամանակով բացակայել եմ մեր երկրից, հորիցս չեմ կարողացել ավելին վերցնել:

### – Ապագայի, գալիքի մասին հաճախ էր խոսում՝ նշելով՝ ապագայի համար ենք նկարում:

– Յուրաքանչյուր նկարչի համար ապագան այն է, որ իրենից հետո էլ մարդիկ գնահատեն նրա արվեստը: Բայց սիրում էր կրկնել՝ ինձից հետո կարող են ավելի լավ նկարիչներ լինել, որոնք են կարող են ինձ գերազանցել: Չնայած ես կարծում եմ, որ մենք չենք գերազանցի հորս:

### – Ինչի՞ց էր նեղվում:

– Նեղվում էր, որ միջոցներ չունի ներկ գնելու համար:

### – Չավակներին ի՞նչ էր խորհուրդ տալիս:

– Սիր միայն հոգուդ եւ սրտիդ ձայնը, այն քեզ չի խաբի, կտավներում ցույց տուր այն, ինչ կուտակված է ներսումդ, ստեղծիր քո յուրահատուկ աշխարհը՝ առանց ուրիշների մտանակելու:

### – Իր տաղանդը սերում էր...

– Վաչագանից, մայր բնությունից, մայրական գեներից, Յայաստանի գույներից... Յետաքրքիր է, որ հատկապես արտասահմանցից, երբ դիտում է նրա կտավները, ասում է՝ բնության մեջ այդպիսի գույներ չկան, բայց պարզվում է՝ կան...

### – Մի քանի տարի հետո Ռոբերտ Կամոյանին ըստ արժանվույն գնահատված տեսնելու համար ի՞նչ կուզեիք մեր քաղաքում ավելացած տեսնել:

– Նախեւառաջ, շատ կցանկանայի, որ Կապանում լինեի մի այնպիսի թանգարան, որտեղ ցուցադրվեին հատկապես կապանցի ժամանակակից գեղանկարիչների աշխատանքները: Իսկ Ռոբերտ Կամոյանի արվեստն ավելի լայն շրջանակներին ներկայացնելու համար իմ ուժերի չափով աշխատանքներ իրականացնում եմ, կցանկանայի, որ դրանում շահագրգռված լինեի նաեւ այլ անձինք, ովքեր իսկապես կարող են գնահատել նրա ժառանգությունը: ■



Նորոյա հայացք

# Նա ստեղծեց ինքնուրույն՝ կամոյանական փիլիսոփայությամբ արվեստ

Եջ 1 ▶ Գլխիկը իրենց պատրաստակամություն են հայտնել նաև կապանցի, բայց օտար ակերտում բնակվող նկարիչները: Այնպես որ՝ ժամանակակից արվեստի թանգարանի հնարավորությունների սահմաններում ցանկություն ունենք մեծարելու մեր մեծերին, որը, իհարկե, խնդրի մասնակի լուծում է: Անհրաժեշտ է այդ հեղինակների համար առանձին թանգարան ունենալ: Ունեցած թանգարանների համար Գյումրի քաղաքին կարելի է միայն նախանձել», – Գեղեցիկ տնօրենը:

«Մենք մեզ պաշտպանված էինք զգում, քանի որ մեր հայր Ռոբերտ Կամոյանը կար: Այսօրվա պես հիշում են, երբ դպրոցական հասակում առաջին անգամ հանդիպեցի նկարիչ Կամոյանին. նրա ազդեցիկ կերպարը մինչ օրս աչքիս առաջ է: Մորս համագյուղացին էր, եւ մայրիկս խնդրեց, որ իմ նկարները նայի ու գնահատական տա: Մինչ նկարչական դպրոցի բացվելը գյուղում մի սեմյակ կար, այնտեղ էինք նկարել սովորում: Ինչպիսի՞ անհամբերությամբ էինք սպասում նրա գալու, սիրով լսում նրա խորհուրդները: Այնուհետև նկարչական դպրոցում մեզ դասավանդում էր, այնքան էր ստիպում նկարել, որ թուղթը պատռվում էր: Կամոյանից շատ բան են սովորել եւ դեռ կտնվորեն, քանի որ նա անսահմանություն է: Քաղցր, հաճելի ու ջերմացնող հիշողություններ ունեն նրա հետ կապված: Կարճ ասած՝ ես նրան շատ եմ կարոտում», – Գեղեցիկ տնօրենը:

«Վերջին հանդիպումս նրա հետ շատ տխուր էր, ինքը մեղացած էր ինչ-որ մեկից, ինչ-որ բանից... Նեղացածությունն էլ իր՝ մանկան մասն մարտի ու պարզ բնավորություն ունենալով էր պայմանավորված: Ցավալի էր՝ մասն ուժեղ, համար ու կամային անձնավորության այդպես ընկճված, կտրված տեսնել, ես զգացի, որ նա հոգնել էր կյանքից: Դարձրի՞ ուզո՞ւմ ես էլի նկարել, ասաց՝ ոչ, ես իմ առաքելությունն արդեն կատարել եմ», – հիշում է Ուրբակը եւ հավելում, որ մարդը սովորաբար ողջ կյանքում նկարված աշխատում է ու մի պահ կանգ է առնում եւ զգում, որ բոլորն իրենց գործով են զբաղված, եւ ինքն ընդհանրապես ուշադրության կենտրոնում չէ: «Կամոյանը հազվագյուտ մարդ էր, լեզբեղ, սրբությամբ է պահում, որովհետեւ դրանցից կամոյանական շունչ է տարածվում:

Կամոյանը չունեւ ոճավորումներ, դեմ էր «իզմ»-երին, նա ինքնուրույն՝ կամոյանական փիլիսոփայությամբ էր ստեղծագործում: Նա այդ մասին այսպես էր ասում. «Մեր մեծերն էլ չգիտեին, որ ռոմանտիկ են կամ նատուրալիստ կամ՝ որ «իզմ»-ն են ստեղծում, հետոն է ամուսն տալիս... Փոքր արա, բայց քոնը, ոչ թե «իզմ»-երի ենթարկվիր»:

Դարձրի, թե Կամոյանի արվեստը հայկական, թե համաշխարհային արժեք ունի, Ուրբակն այսպես պատասխանեց. «Օրինակ՝ շատ ազգերի ժողովրդական երաժշտությունը հաճելի է բոլորիս: Առհասարակ այն, ինչ ծնվում է ժողովրդի միջից, կոսմոպոլիտ է: Նույնը նաև Կամոյանի արվեստի մասին կարելի է ասել՝ պատկերելով իր հարգած գյուղ, բնությունը, մարդկանց՝ նրա արվեստն աշխարհի մի մասնիկն է դարձել»:



Րոբիս Միխայան



Ուրբակ (Ռուբեն Կոստանյան)

որ իր ողջ կյանքը լիարժեք նվիրեց արվեստին», – բնութագրում է Ուրբակը ու Գեղեցիկը, որ Կամոյանը մեկ այլ հետաքրքրություն էլ ուներ՝ մեղավապահությունը: Իսկ նրա աշխատասիրության թերեւս ամենավաղ բնութագրումը նրա հետեւյալ խոսքերն են. «Մի մարդ էլ չկա, որ ժամանակ պարտք անեն, օրվա 24 ժամը չի հերիքում: Ես նկարելու եմ նաև մահվանից հետո»:

Գիտելիքը մատուցելու, երեխային մատչելի բացատրելու ձիրքը ոչ բոլորին է տրված, բայց Կամոյանը հրաշալի տիրապետում էր նաև այդ արվեստին: Նրա ստուդիայում բազում աշակերտներ, ինչպես ինքն էր ասում, կոկոններ են բացվել, որոնք հետագայում իրենց իսկ բուրմունքից զարմացել ու արբել են: «Իմ երեխաները էսթետիկական պահանջներ ունեն. ես «նկարչություն» չեմ պարապում, աշխարհի հանդեպ վերաբերմունք են փորձում ձեռավորել նրանց մեջ», – ասում էր Կամոյանը եւ հավելում, որ ինքն ի՞նչ է, իրենից հետո ավելի լավերն են գալու:

Ինչպես Րոբիս Միխայանը Գեղեցիկ, նա Կամոյանի՝ իրեն պատկանող նկարները

վերաբերվում արվեստաբաններին, նրանց գործունեությանը: Ուրբակը հարցին հարցով պատասխանեց. «Ի՞նչ էր կարծում՝ արվեստագետ՞ տղ, որի ձեռքերը թաթախվում են յուղաներկի մեջ, ավելի ճիշտ կզգա իր պատկերածը, թե՞ արվեստաբանը, որ անմիջական չփուն է չի ունեցել նկարի ստեղծման հետ»:

Այս քաղաքի տաղանդավոր անձանցից մեկին՝ Ռոբերտ Կամոյանին, պետք է մեծարեին նրա կենդանության օրոք, իսկ նա նույնիսկ պատվավոր քաղաքացու կոչում չստացավ, միայն հետմահու «Կապան» նույն մեդալ տվեցին: Չնայած իսկական տաղանդավոր մարդուն բնորոշ հակասական բնավորությունը, չցուցադրվելու հատկանիշն էր նաև ինչ-որ առունով պատճառը, որ ըստ արժանվույն չզգահատվեց, բայց նա չի նկարել նրա համար, որ իրեն մեծարեն: Նա պարզապես նկարել է. ինքն ու իր մուլբերտը (նկարակալ):

«Արվեստի հանդեպ անտարբերությունն է մեր քաղաքում իշխում, երբ մարդը մահանում է, հետո են սկսում մեծարել: Դիշում են՝ ժամանակին Կամոյանն

առաջարկել է քաղաքին նվիրել մոտ 150 կտավ, միայն թե համապատասխան տարածք տրամադրեն ցուցադրության համար», – Գեղեցիկը Րոբիս Միխայանը:

Երջանկահիշատակ Վաչե Եփրեմյանը Ռոբերտ Կամոյանին մեծության անթերի մարմնավորում է համարել: Նկարիչ Ուրբակը նրա այս բնութագրումը հետեւյալ կերպ բացատրեց. «Շատերն էին Կամոյանից մեղանում նրա համար, որ չէր սիրում շփվել, իր արվեստանոցում շատ մարդ ընդունել: Բայց ես հասկանում եմ նրան. այդքան մարդկանց հետ շփվելն արդեն իսկ հոգնեցուցիչ է: Կամոյանը մեծության մեջ է ստեղծել իր բոլոր կտավները՝ կղզիանալով ինքն իր աշխարհում»:

Ընդունված է արվեստագետներին հարցնել նրանց ոգեշնչման աղբյուրի մասին, Կամոյանի դեպքում այդ հարցի պատասխանը մեկն է. նրա ոգեշնչման աղբյուրն իր գյուղն է, Կապանը, այնտեղ բնակվող մարդիկ, շրջապատող բնությունը. նա ասարում էր դրանցով:

Արվեստագետներն արձանագրեցին նաև, որ, ինչպես յուրաքանչյուր արվեստագետի, Ռոբերտ Կամոյանի արվեստը տարիների ընթացքում, իհարկե, որոշ փոփոխություն է կրել, բայց նա իր ձեռին հավատարիմ մնաց, շուկա չմտավ եւ մոնդային տուրք չտվեց: «Եթե հավատարիմ ես մնում քո ձեռին, ասպա այդտեղ դու ինչքան ցանկանաս, կարող ես կատարելագործվել», – Գեղեցիկը Ուրբակը:

Նկարիչ Ուրբակի հետ Կամոյանի ամենասիրելի գործից խոսելիս նա հետաքրքիր պատասխան տվեց. «Ամենասիրելի գործս Ռոբերտ Կամոյանն է, իր էությունը, ներկայությունը, որ դրական էներգիա էր տալիս: Ինձ միշտ ատում էր. «Ռուբիկ, երբ դատարկվես, կգաս»: Խոսում էինք, եւ լիքքավորված մտնում էի արվեստանոցս»:

Կամոյանական կտավների կենտրոնում կյանքն է՝ իր բոլոր դրսևորումներով, նրա գույները, հատկապես կարմիրը եւ դեղինը, Ուրբակի խոստովանությամբ, հետագայում ազդեցություն են ունեցել նրա արվեստի վրա: Ի սկզբանե իր կտավների ոչ վառ, տխուր գույները փոխարինվեցին կենսատու գույներով՝ միայն Կամոյանի արվեստանոց մտնելուց հետո: «Ինչպես կարող էր նրա արվեստը իմ՝ նրա աշակերտի կայացման գործում ազդեցություն չունենալ. մահելուց առաջ այն պարզ պատճառով, որ նրա պատկերած աշխարհը նաև իմն էր, քանի որ երկուսս էլ վաչագանյան արձաններն ունենք: Նույն Լեզի բիբին, Խուստուփը, ժառերն ու քիտրը... Կարճ ասած, այն, ինչ մատուցում էր Կամոյանը, նաև իմն է: Այսօրվա պես հիշում եմ՝ երբ առաջին անգամ մտա Կամոյանի արվեստանոց, Խուստուփը եւ մեր գյուղի պատկերն ինձ «դիմավորեցին», որ ինձ շատ ոգեշնչեց», – Գեղեցիկը Ուրբակը:

«Ես ինձ երջանիկ եմ զգում, որ եղել եմ նրա աշակերտը, երբեմն արժանացել նրա գովաբանական խոսքին, որ մի առանձին էներգիա էր տալիս ինձ: Կամոյանն իսկապես հզոր անհատականություն է, մանկուց եմ ճանաչում նրան եւ նման մարդուն չսիրել հնարավոր չէ. նա մեզ համար բացել է մի պատուհան, որտեղից նայել ենք աշխարհին՝ հաղորդակցվելով նրա ուրույն փիլիսոփայությանը: Կամոյանի տեղը, կարծում եմ, դեռ երկար ժամանակ բաց կմնա», – ամփոփեց Ուրբակը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Անտառում, յուղաներկ, 40x60



Նկարչի սերը, յուղաներկ, 100x100

Չարմանալի էր նրա գրագիտությունը, հրաշալի տիրապետում էր հայ, ռուս եւ արտասահմանյան գրականությանը, տարբեր ազգերի արվեստին, բոլոր հարցերի պատասխանները կարելի էր նրանից ստանալ, եւ, ինչպես նրան բնորոշում էին, քայլող հանրագիտարան էր: Բ.Միխայանը պատմեց, որ մի անգամ հարցրել է Կամոյանին, թե երբ է հասցրել այդքան նյութ ուսումնասիրել, նա խոստովանել է, որ նկարիչների միության գրադարանում աշխատելու տարիներին:







Տարագրույց Ռոբերտ Կամոյանի հետ

# Նկարիչը ցավ նկարելու, ցավ բուժելու համար է

Հատված հարցազրույցից



ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

## Նկարիչը ցավ է պատկերում

- Նկարիչը տեսարանիկներ նկարելու համար չէ, այլ ցավ նկարելու, ցավ բուժելու: Վատ է, երբ նկարիչը հիվանդ չէ: Պիտի հիվանդանա իր հիվանդների ցավով: Հիվանդն էլ ո՞վ է. իր ժողովուրդն է... Ժողովրդի ցավը նկարելը. սա է նկարչության նպատակը: Բժիշկը բուժում է ֆիզիկականը, նկարիչը հոգին է բուժում: Բայց ինքը չի գիտակցում դա, իր մեջ ուղղակի դրված է եղ առաքելությունը: Բժիշկն ամեն ինչ գիտակցորեն է անում, ունի իր հասցեատերը, նկարիչը հասցեատեր չունի: Բայց պիտի կարողանա հոգեւոր դարման դնել մարդու վերքի վրա:

Մարդիկ այն պահին ընկալում են դա, թե՞ ոչ, դա պե՞տք է իրենց, թե՞ պետք չի,

մեկ է, բոլոր ժամանակներում այդ է եղել նկարչի կոչումը: Բոլորն էլ դարձ են նկարելու ոչ թե քար, ծառ, հող, չգիտեմ ինչ... Կոչում, բան չունեն, անգամ նկարիչների միության անդամ չեն եղել: Նկարիչների միությունը մի մեծ կաթսա էր. բոլոր մեծություններն ուսում էին լավը, ոսկորները շարունակում փոքր նկարիչներին: Ոչ մի կապ չունեի նկարչության հետ, մարդկային իրական արժանիքների հետ: Ես դա գիտակցեցի արդեն մեծ քաղաքներում, որտեղ շատ ցուցահանդեսներ են արել:

## Վերադարձ

- Էլ բան չկա անելու: Գնում եմ Սիբիր, Հեռավոր արեւելք, Կամչատկա, հետ եմ գալիս շենյոյ, եղջերուներով, մի բանի ամիս գալիս եմ: Հայտնվում եմ Մոսկվայում, տեսնում նույն մթնոլորտը, նկարիչները, ուսանողները: Թողնում-գալիս եմ Երեւան, հետո Կապան ու այլևս ոչ մի տեղ չեն ցանկացել ապրելու գնալ: Ճիշտ է, հաճախակի շրջել եմ խՍՀՄ հանրապետություններում, ցուցահանդեսներ արել: Բայց հիմնավորվել... Չէ՞ որ այսքան մարդ սպասում է, որ իր ջուրը պարզեցնես:

Դե նկարչին բնությունն է սնում, մեկ էլ մարդը: Եթե 10 իմ նմանը լիներ, ես բնությունն էլի կսներ, ես ժողովուրդը էլի կսներ: Գնացել եմ ուրիշ տեղ, նկարել եմ. գերազանց նկարում եմ, համբավ ունեմ, բայց որ հետո մեծ-մեծակ մնում ես նկարի հետ, տեսնում ես՝ ինչ ես նկարել, ասում ես՝ ի՞նչ գործ ունես այնտեղ: Ուրիշ տեղը



Ֆին Վաչագան, յուղաներկ, 50x100

խորթ է, այնտեղի դեմքերն էլ են խորթ:

## Հեղուկ կգնահատի

- Գալիս եմ այստեղ ու սկսում քիչ-քիչ տնտղել, որ տեսնեմ ես ինչ է ժողովուրդը, հասկացությունը, մարդը ով է, աշխարհի պրոտը որտեղ է, ու սկսում եմ նկարել, նկարել: Տարիքս էր, համբավն էր, թե մարդիկ կային, որ հասկացան... Դարձա Կամոյան: Երեւի մեծ բան է էլի, որ ազգանունով եմ կոչում: Հետո ընտանիք, երեխաներ, հետո պիտի ամեն մեկին մի պատահա հաց տաս: Ու այդպես էլ մինչեւ հիմա նկարում եմ: Թե նկարներս ի՞նչ արժեք կունենան կամ հետագայում ինչպես կմեկնաբանվեն, ոչ ես կարող եմ ասել, ոչ էլ դու, որովհետեւ դա նկարչի մահից հետո է լինում, ու դեռ շատ ավելի հետո:

Չուլային կամ Վելասկեսին իր էպոխան է ծնել, այդպես էլ մեր էպոխան ծնել է մեզ: Ժողովուրդը խնոր է հունցում, եղ խնորից մի բան սարքում, որ իր դրոշակակիրը պիտի դառնա: Հիմա եթե ռոմանտիկ շրջանի նման կամ կուբիստների նման նկարես, ծիծաղելի է: Բայց թե ժամանակը մեզմից ինչ է պահանջում, մշուշի մեջ է: Նրանք էլ չգիտեին, որ ռոմանտիկ են կամ մատուրալիստ կամ՝ որ «իզմ»-ն են ստեղծում, հետոն է անուն տալիս: Հիմա մենք էլ ընթացքի մեջ ենք:

## Նկարչի ծնունդ

- Կամ 16 տարեկան աղջկերթն են խաբում-սարքում նկարչին, գորդին... կամ էլ ինքը թքած ունի բոլորի վրա, ինքն է ուզում հաստատվել, առանց դրա, առանց արվեստաբանների... Չգիտեմ: Չէ՞ որ փուչիկներ շատ կան, լիքը նկարիչ կա փչած, ուռչած: Արվեստաբանները փչում են, ես եմ գրում, էն են գրում: Շատերը դիտավորյալ են անում:

Խեղճ նկարչին էլ ընկնում է թյուրիմացության մեջ, լսում է նրանց: Բա պիտի հավատա, իրեն փառքի սնունդ է պետք չէ: Բայց միտքը պիտի շատ զգաստ պահել: Քիչ է, որ ես գիտեմ իմ թերությունները կամ՝ ինչ եմ անում, դո՛ւք պիտի իմն ասեք: Բայց շատերը կոչ են գնում...:

Այսօր կարելուրն այն չէ, թե ինչ ես նկարում, կարելուրն այն է, որ նկարիչն անուն ձեռք բերի: Եվ շատերը գիտեն, թե նկարիչ լինելն ինչ-որ բացառիկ կատեգորիա է, որն է ժողովրդից բարձր է: Եվ սկսում են այնպես պահել իրենց, որ առանձնանան հագուստով, մազահարդարանքով, միուրք են պահում, ներկոտ շորերով են շրջում, «արվեստագետի տեսք» են ընդունում: Այ մարդ, քո ֆունկցիան ո՞րն է, ի՞նչ պիտի անես, գնացել՝ ինչ ես անում:

Իհարկե, ժանաչված լինելը լավ բան է, բայց դա ոնց որ սառույց լինի. շատ հեշտ է սայթաքելը, մի փոքր տատանում՝ ընկնում ես, քիթ-բերան ջարդում: Ու էլ հետ չես կարող գնալ: Նկարիչը նաեւ շատ նուրբ արարած է, եթե իհարկե, նկարիչ է, մի փոքրիկ քար կարող է ընկնել ոտքի տակ ու էլ վեր չի կենա: Նաեւ քարկոծում են, փետով, ինչով ասես խփում (սիմվոլիկ են ասում):

# Ռոբերտ Կամոյան. «Իմ թիկունքին Քուչակն է, Նարեկացին...»



ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայացքը՝ խուստուփի ամենաբարձր կատարին, ոտքերը՝ հողոտ, իր ներկապակի խառնարանի՝ միայն իրեն հատուկ գույնով ու գծով ամեն օր մի նոր աշխարհ է ստեղծում: Զրույցը Բարձրյալի հետ է՝ տիեզերական ու նաեւ շատ երկրային թեմաներով: Արվեստանոցում, որտեղ կայացավ մեր հանդիպումը, շատ բան չէր փոխվել: Պատերին կախված, այս ու այն կողմին հենած նոր գործերն են, ու ինքը՝ ցաք ու ցրիվ մորուսով, հյուրասեր ու փոքր-ինչ զարմացած, հարցակալներով լի հայացքով, ջլուտ, պիրկ բազուկներով՝ պատրաստ ամեն պահ կյանք տալու մի նոր կտավի, ու մի միտքի, օդից կախված զգացողություն, որի անունը նորին մեծություն Ստեղծագործություն է...:

## Ի՞նչ է ժամանակը նկարիչ-արվեստագետի համար:

- Նկարչի համար ժամանակը սկիզբ է առնում վաղ անցյալից, հասնում իրեն ու միավում ապագային: Նկարիչն այն որսում է ու առնում շրջանակի մեջ: Զուլան ասել է. «Նկարիչն իր ժամանակի խտացած խիղճն է»: Ոչ մի նկարիչ չի մտածում ստեղծել մի բան, որ կարմնացներ իր ժամանակակիցին: Նա շատ ավելի առաջ է նայում՝ տասնամյակներ, նույնիսկ հազարամյակներ առաջ... Նա ուղղորդում է մեզ դեպի առաջ: Նկարիչն իր ժամանակի ճգնաժամն է: Ի վերուստ տրված շնորհով նա պիտի այրվի, մոխրանա ու դառնա գույն: Նրա շարժիչ ուժը սիրտն է: Միայն սիրտն է ուղղորդում նրան: Նրա հոգին ընդունիչ է, ալեհավաք: Նա, ով կարողանում է լսել ու տեսնել, ճիշտ ուղու վրա է: Նկարչի մարմինը կրակ է, ոչինչ չի կարող մարել այն: Հրե լեզվակներն այրում են շատ սրտեր, բայց ոչ բոլորին է տրված ականջալուր լինել նրա ռիթմին: Նկարիչը մեծ սեր պիտի ունենա առ հող, առ ժողովուրդ, առ իր թագավոր:

Կռիվը լույսի եւ խավարի միջեւ է: Հաղ-

Էջ 8

Էջ 8

# Ռոբերտ Կամոյան. «Եթե մեկին նմանվեի, չէի զբաղվի գեղանկարչությամբ»

Էջ 5  
Իմ նկարները հիմնականում մասնավոր հավաքածուներում են: Անցել եմ խՍՀՄ մեծ ու փոքր քաղաքներով, Սվերդլովսկում, Նովոսիբիրսկում մեծ ցուցահանդես են բացել, նույնը Վլադիվոստոկում, այս վերջին ցուցահանդեսի նկարներում հիմնականում նավաստիներին եւ նրանց առօրյան են պատկերել, ցուցահանդեսի ողջ հավաքածուն թողել եմ իրենց: Լենինգրադում բացված ցուցահանդեսի նկարները նվիրել եմ ընկերներիս եւ մտերիներիս: Յուրմալայի ցուցահանդեսից ես ոչ մի նկար չբերեցի: Երկու ամսվա աշխատանքներս մնացին այնտեղ: Բացի այդ, Յուրմալայում մասնակցել եմ մրցույթի, մոտ 800 գեղանկարիչ

եր մասնակցում, գրավել եմ առաջին տեղը: Ինքնագովուրդում չլինի, եթե իմ նկարներն իրար կողքի շարես, կհասնի Երեւան: Դրան գունարած տասը հազար գծանկարը:

## Մի նկարում Անդրանիկ զորավարն է, Սմբատ Մելիք-Սպեփանյանը, Արամ ղային

Այդ նկարով ուզել եմ ցույց տալ, որ Անդրանիկը եկել է Կապան: Այդ մասին մանրամասն նկարագրված է Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» գրքում, թե ինչպես գորավարը եկավ Պղնձի քաղաքը, հանդիպեց Սմբատ Բեկին, գնացին Առաջաձոր: Չիով գալիս էին քաղաք, վե-

րադառնում: Ես տեսել եմ այս քաղաքի հիմնադրումը, հինգ հազար բնակչություն ուներ, երեք բազմաբնակարան շենք կար՝ երկրորդ շենքը, քարի շենքը, ԻՏՍ-ի շենքը: Մարդիկ գյուղերից գալիս էին, հանքերում աշխատում եւ վերադառնում: Հետո գյուղաբնակները սկսեցին այստեղ տներ կառուցել, եւ բնակավայրը դարձավ քաղաք: Հիմա այդ ամենի հեռավոր հիշողություններն են մնացել: Այժմ շենքեր կան, մարդիկ կան, բայց քաղաք հասկացություն չկա, որովհետեւ դա ենթադրում է բնակիչների հավաքական միասնություն: Այդ միասնությունն այն ժամանակվա կար, ես դեռ փոքր էի: Ամբողջ ժողովուրդը մի մարմին էր, եւ բոլորը ձգտում էին մի լուսավոր նպատակի:

Պատերազմ էր, հայրս կամավոր մեկնեց ռազմադաշտ, հազարավորները մեկնեցին: Պետք էր երկրին պղինձ տալ, ողջ բնակչությունը հանքերում էր աշխատում: Թերթն էլ կոչվում էր «Պղնձի համար»: Ահա այսպես:

## Կոչումների մասին

Ոչ մի կոչում չունեմ, Կապանում ո՞նց հնարավոր է, որ կոչում ստանամ: Ո՞վ իմ մասին գիտի, որ կոչման արժանացնեմ: Կապանում ո՞վ է հետաքրքրվում Կամոյանով: Ոչ մի բան չեմ ուզում, ինձ հանգիստ թողնեն, իմ գործով զբաղվեմ: Տեսնեմ կկարողանամ՝ ստեղծել իմ գլուխգործոցը, ասես կամաց-կամաց մոտենում եմ այդ նպատակին: Մի մարդու կյանքը շատ քիչ է մի գործով զբաղվելու եւ հիրավի գլուխգործոց ստեղծելու համար: Եթե յուրաքանչյուր գեղանկարիչ մի գլուխգործոց թողնի, նրա անունը ընդմիջտ կմնա:

«Այոնյաց երկիր»  
31 հունվարի 2012թ., N22 (243)



# Նրա ստեղծագործություններից լույս է ծորում

Խոսք Ռոբերտ Կամոյանի 75-ամյակի կապակցությամբ



### ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«Սյունյաց երկիր»  
31 հունվարի 2012թ., N22 (243)

Հայ արդի կերպարվեստում իր տեղը վաղուց գտած, անհատական ոճ ու ձեռագիր մշակած նկարիչը՝ առայսօր չգնահատված ու հանրությանը ըստ պատշաճի չներկայացված, չնկատվեց նաև ծննդյան 75-ամյակի կապակցությամբ, որը լրացավ հունվարի 6-ին: Բայց դա փոքր-ինչ անգամ չնսնձարեց եւ չէր կարող նսնձարեցնել Ռոբերտ Կամոյանի արվեստը:

Նրա ստեղծագործական ուղին, ստեղծագործությունների բնութագիրը մի քանի հրապարակումների մեջ այսօր փորձում են ներկայացնել իմ գործընկերները, ուստի եւ ինքս գերծեմ մնում կամոյանական արվեստը քննարկելուց: Բայց կուզենայի շնորհակալություն հայտնել նրան՝ հայ կերպարվեստում ունեցած համեստ ներդրման, ինչպես եւ «Սյունյաց երկիր» հետ համագործակցության համար: Մեր համագործակցության արդյունքում վերջին տարիներին ծնվեցին Ակսել Բակունցի, Սուրբ Գրիգոր Տաթևացու, Համո Սահյանի, Նիկողայոս Աղոնցի դիմանկարները: Ծնվեցին «Չագեծոր բերդի հիմնադրումը Չագ Գահապետի կողմից», «Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նավակատիքը 911թ.» մեծադիր կտավները: Ստեղծվեց «Ագարակ քաղաքը» խիստ ուշագրավ կտավը: Մեկ այլ մեծադիր կտավ էլ մոտ ապագայում կարտագույի Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքի քաղաքական ու հոգեւոր կենտրոն՝ Շաղատ կատարած այցը եւ նրա հանդիպումը Հայաստանի ու Վրաստանի մարզպան, բոլոր ժամանակների ամենանշանավոր սյունեցիներից մեկի՝ քաջ սիսական Վասակի հետ:

...Առհասարակ զգուշությամբ եմ մտել կերպարվեստի աշխարհ եւ որել է գեղանկարչի ստեղծագործություններին գնահատական տալու հավակնություն չեմ ունեցել՝ մտածելով, որ դա, նախեւառաջ, արվեստաբանների գործն է: Սակայն պատմական, գրական դեմքերի կերպավորման, պատմական իրողությունների գեղարվեստական արտացոլման ընթացքում Ռոբերտ Կամոյանի մի յուրահատուկ մոտեցումը նկատեցի: Վրձինը վերցնելուց առաջ, զուտ գեղարվեստական խնդիր լուծելուց առաջ խորությամբ ուսումնասիրում է պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ քաղաքական իրավիճակից մինչեւ սիմվոլներ, մինչեւ տարագ ու կենցաղային մանրուքներ, իսկ պորտրետային աշխատանքներ սխեմայից առաջ՝ տվյալ անձնավորության կյանքն ու ստեղծագործությունը: Եվ մինչեւ գեղարվեստական կերպարանք ստանալը տվյալ ստեղծագործությունն արդեն ունենում է իր գաղափարական բովանդակությունն ու հենքը: Միայն դրանից հետո ենք առնչվում նրա վարպետությանը, գեղարվեստական բարձր ճաշակին, ձեւի եւ բովանդակության ներդաշնակությանը: Պատմական թեմաներով այդ ստեղծագործությունները, որ կոմպոզիցիոն դասավորվածություն ունեն, մեր ժողովրդի անցած ժամանակաշր-

ջանի կոնկրետ դրվագների լավագույն վերամարմնավորումն են: Ռոբանով տեղյակ եմ, Ռոբերտ Կամոյանը ստեղծագործում է նկարչության մի քանի ժանրերում: Բայց նշված գործերում միանգամից համադրված են մի քանի ժանրեր՝ բնանկար, դիմանկար...

Հի կարելի չնկատել նրա ուրույն գիծը, ուղղակի ազդեցություններից զերծ պահվածը, հայրենի երկրամասի նկատմամբ սերը, սյունյաց մեծերի հանդեպ՝ պատկառամբը, ազգային մտածելակերպը: Յուրօրինակ է նաև նրա գունային համակարգը, որ տրամադրող է, անմիջապես ներազդող: Այնպես որ՝ ինձ թույլ եմ տալիս ասել, որ Ռոբերտ Կամոյանն օժտված է ի վերուստ տրված տաղանդով, որ նրա ստեղծագործությունները հայ արդի կերպարվեստի արժեքավոր նմուշներից են: Եվ դրանց շփվելիս գեղագիտական հաճույք ես ստանում, կյանքի առօրյայից բարձրանալու ձգտում ունենում: Այդ բոլորով հանդերձ, սակայն, նրան վիճակված չէ, կարծեք, տեսնել իր իսկական գնահատականը, իր նշանավոր գործերի ցուցահանդեսն ու ստեղծագործությունների ալբոմները, իր նկարների քանգարան-պատկերասրահը... Գոնե ուշացումով, կարծում եմ, այդ բացը լրացնելու ցանկություն եւ վճռականություն կորսելուց Սյունիքի տարածքային ու Կապանի տեղական իշխանությունները: Ծնունդը շնորհավոր, սիրելի ընկեր ու բարեկամ: Քեզ՝ քաջառողջություն: Վատահ եմ, որ նոր ստեղծագործություններ ես պարզեւելու մեր ժողովրդին՝ մաքրություն, լույս, սեր եւ հավատ սփռող, որոնք ներշնչանքի աղբյուր են լինելու (ինչպես մյուս գործերը) ոչ միայն ժամանակակիցներին, այլեւ մեր երեխաների համար:



## Ցանկ՝ գեղանկարների՝ ստեղծված «Սյունյաց երկիր» պատվերով ու տպագրված այդ թերթում (2003-13թթ.)

1. «Ակսել Բակունց», կտավ, յուղաներկ, 100X70, 2008թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան: Գեղանկարի հովանավոր՝ «Առանցք» ՄՊԸ տնօրեն Գագիկ Առուշանյան (տես՝ «Սյունյաց երկիր», N13 (185), 8 հունիսի 2008թ.):
2. «Ագարակ», կտավ, յուղաներկ, 100X80, 2009թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Սամվել Հայրապետյան (տես՝ «Սյունյաց երկիր», N19, (191), 10 հոկտեմբերի 2009թ.):
3. «Խաչատուր Աբովյան», կտավ, յուղաներկ, 70X60, 2009թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան (տես՝ «Սյունյաց երկիր», N23 (195), 10 դեկտեմբերի 2009թ.):
4. «Սուրբ Գրիգոր Տաթևացի», կտավ, յուղաներկ, 70X60, 2010թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Յուրի Սաֆարյան, «Յենրիկ եւ որդիներ» ՄՊԸ տնօրեն Յենրիկ Հարությունյան, «Առանցք» ՄՊԸ տնօրեն Գագիկ Առուշանյան (տես՝ «Սյունյաց երկիր», N16 (213), 25 սեպտեմբերի 2010թ.):
5. «Համո Սահյան», կտավ, յուղաներկ, 85X83, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Աշոտ Մինասյան (տես՝ «Սյունյաց երկիր», N 7 (226), 14 ապրիլի 2011թ.):
6. «Ռաֆիկ Մինասյան», կտավ, յուղաներկ, 90X70, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Արտուր Աթայան (տես՝ «Սյունյաց երկիր», N8 (227), 4 մայիսի 2011թ.):
7. «Չագ Գահապետը հիմնադրում է Չագեծորի բերդը», կտավ, յուղաներկ, 170X110, 2010թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավորներ՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյան, (տես՝ «Սյունյաց երկիր», N10 (229), 28 մայիսի 2011թ.):
8. «Նիկողայոս Աղոնց», կտավ, յուղաներկ, 82X64.5, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյան:
9. «Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նավակատիքը 911 թվականին», կտավ, յուղաներկ, 200X140, 2011թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավոր՝ Վահանավանք պատմամշակութային ՀԿ նախագահ Սասուն Մանուկյան, (տես՝ «Սյունյաց երկիր», N30 (271), 15 դեկտեմբերի 2012թ.):
10. «Մելիք Հայկազն 2-րդ», կտավ, յուղաներկ, 100X90, 2013թ., հեղինակ՝ Ռոբերտ Կամոյան, հովանավորներ՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան (տես՝ «Սյունյաց երկիր», N7 (280), 30 մարտի 2013թ.):



Տարիներ ի վեր «Սյունյաց երկիր» թերթի նվիրական բարեկամն էր



Նայրենի հողն ու բնաշխարհը՝ արմատ-ակունք



Նայապուր, յուղաներկ, 40x60

Ռոբերտ Կամոյան.  
«Իմ թիկունքին  
Քուչակն է,  
Նարեկացին...»

Եջ 6  
բուն է տիեզերական ռիթմը, այն ստեղծում է տատանում, եւ դրանից ծնվում է տիեզերական երաժշտությունը: Լույսին ծառայողներ կան եւ տիեզերքում, եւ երկրին կառչած: Նկարիչը երկնային ու երկրային միասնության մեջ է: Ամենեւին կարելի է նրա հասցեականությունը: Ժամանակը նկարչի ուղեծիրն է, որով նա ընթանում է: Մեկ ստեղծագործության վրա նա կարող է տքնել երկար ժամանակ՝ մինչեւ ստանա կատարյալը, կամ անկատարը, բայց իր իդեալը:

– Ռ՞րն է նկարիչ Կամոյանի փիլիսոփայությունը:

– Բոլոր արվեստների եւ երեւոյթների սինթեզն է: Մեկ աչքով անցալին եմ նայում, մյուսով՝ ապագային: Մեկ ուղեով հողի մեջ եմ, մեկով՝ տիեզերքում: Չեռքիս մեկը սնվում է մայր հողից, մյուսը՝ մայր տիեզերքից: Նրանց միասնության մեջ է մշանակետը: Այդ անասնամանության մեջ պետք է կարողանաս գտնել սկզբնակետը: Դա այն հիմնականն է, որը որպէս ասելիք ի հայտ է գալիս, մնացալը կառուցվում է նրա շուրջը: Պետք է կարողանալ տարածության եւ ժամանակի մեջ գտնել կարեւորագույնը, մնայունը, իսկ դա մարդն է՝ բնության ամենակատարյալ ստեղծագործությունը, առանձնապէս կինը՝ որպէս բնության ամենամեծ առեղծվածը: Նկարիչը պետք է կարողանա բացել այդ տիեզերքը: Միակ փրկությունը տքնաչան աշխատանքն է, ազնիվ լինելը խղճի առջեւ: Այն նաեւ միակ փրկությունն է բոլոր դավերի դեմ՝ անգիտության, տգիտության... Ես ոչ մի պարագայում կանգ չեմ առնում... երբեք, ոչ մի դեպքում: Նկարիչը շրջապատի համար ավելի շատ անհասկանալի է, մերկ, բայց իրականում նկարչի առաջ եմ, նկարչի առջեւ՝ մերկ: Նրան է տրված մարդուն տեսնելու, զգալու, նրա ներքնաշխարհը թափանցելու, վեհացնելու կամ ծաղրելու կարողությունը: Նա կարծես անտեսանելի հայելի լինի, որ տեսնում է անտեսանելին, իր հզոր էներգետիկան է թափանցում մարդու զգայական աշխարհի բոլոր ծալքերը: Իմ արվեստանոցում մնացել ենք դեմ դիմաց՝ ես եւ երկիր Գայաստանս: Իմ Կոստան Ջարյանն ավելի մեծ է, քան Եսթիլեան ու Դանթեն, որովհետեւ իմ թիկունքին Քուչակն է, Նարեկացին, Ֆրիկը, Մոնիկն ու Պիտակը...:

Մեկ-մեկ արվեստանոցի պատուհանից նայելով աշխարհի անցուդարձին՝ երկնտուն եմ, բայց դա միայն մի պահ... Դա շրջող պահին անմիջապէս հավատս ամրանում է: Չեմ կանխածում, առջեւում էլ ծնվում են ընտրյալներ:

– Ի՞նչ է պատգամում Կամոյան նկարիչը:

– Ես չեմ սովորեցնում իմ աշակերտներին նկարել, ինձ պետք են ծշմարտություն, սեր, հավատ առ Աստված: Բնության առեղծվածները պեղելը, նրանց հասկանալը, այս ամենն ընդհանրացնելով՝ ընդգծել, գտնել կարեւորագույնը: Այս բոլորը ենթարկելով բնության օրենքներին՝ տեղավորել շրջանակի մեջ... Նկարակալի մաքուր կտավին դու պիտի մոտենաս մաքուր մտքով ու խղճով, կեղծեցիր, նա քեզ կպատժի: Պատգամս ստեղծագործություններս են: Ողջ իմաստն ու խորհուրդը նրանց մեջ են, շարունակությունը՝ աշակերտներիս մեջ:

«Այունյաց երկիր»  
31 հունվարի 2012թ., N22 (243)

Նկարիչը ցավ նկարելու, ցավ բուժելու համար է

Հատված հարցազրույցից

Եջ 5  
Եթե ինքը հանկարծ կռահա ու քար վերցնի, իր նպատակից հեռանում է: Պիտի ուշադրություն չդարձնի, գնա, գնա մինչեւ վերջ...

Չնայած արվեստը վերջ չունի

– Մրցավազքի մեծն է, ես ուղրանում նայում ես. առջեւիցդ 20 հոգի գնում է: Ուզում ես առաջ անցնել նրանցից: Անցնում ես, տեսնում առջեւում 100 հոգի էլ կա, ու էսպես... Ուստի դա նպատակ չպիտի լինի: Պետք է քեզ համար հանգիստ, հավասարակշռված ապրես...

Մի նկար ունեն: Դե մուսա հասկացությունը, չէ, ավելի ծիշտ՝ սիրունության սիմվոլը կինն է չէ՞:

Նայած ում համար

– Չէ, դե բոլորի համար ուրիշ սիմվոլ չկա, եթե ասես եղնիկն է, արջն է, չեմ հավատա: Կնոջ մարմինն է: Մի մեծ սար եմ նկարել, զագաթին այդ կինն է կանգնած, ու հազարավոր նկարիչներ աստիճաններով, մի կերպ, ընկնելով հա ուզում են հասնել նրան: Մեկը դեռ ներքեւում է, մյուսը հասել, ոտներն է գրկել... Բայց գնալ-կանգնել նրան հավասար հնարավոր չէ: Ուրեմն նպատակն էլ չպետք է դնել:

Ելակետը

– Ցանկացել եմ մնանվել այն մարդուն, ում որ նկարում եմ: Որ ես ու ինքը

դառնանք միասնություն: Եղ չարչրկված հասկացությունը կա չէ՞, «ժողովուրդ» են ասում: Հիմա ով ասես «ժողովուրդ» է ասում: Ծովի ավազի մեծն ուզեցել եմ մնանվել նրան, ժողովրդի ցավերը վերցնել ու նկարել: Չէ՞ որ ոչ մի նկարիչ չի կարող նկարել որեւէ մեկին: Գիտեք, թե որ նկարել եմ հազարավոր մարդկանց... Նկարիչներն իրենց են նկարել: Ելակետը դու ես, գնում ես, պատվում եղ կերպարի կողքով, հետ գալիս, նորից դառնում Դու, ուրիշ ձեւ չկա: Եթե լինեիր, մինչեւ հիմա արած կլինեիր:

Շատերն ասում են՝ Խուստուփի նկար տուր: Ասում եմ՝ Խուստուփը դեմը է, նայեք էլի... Ավելի մեծ հաճույք կստանաք: Չէ, պիտի տանը կախեն... Այսինքն՝ իմ աչքերով, իմ միջով վերարտադրված Խուստուփը:

Ամեն ինչ շուտ է

– «Քաջ Նագարում» մի կերպար կա՝ ցնդած տիրացուն: Ով ինչ ասի, ասում է՝ ժամանակի մշան է: Հիմա այս բոլորը ժամանակի մշան է. աշխարհը, արվեստը դարձել է շուտ: Ով չի կարողանում շուտ սարքել... Բայց կան եզակի մարդիկ, որ հակադրվում են շուտի կանոններին, մաքուր հատիկը անպայման մնում է, եթե չմնար... Գրանտ Մաթեոսյանը կար չէ՞... Ուրեմն ինչ խոսքերով ասեմ. արվեստագետն ի՞նչ է անում. թթվածին է տալիս, բարձր օդ: Ժողովուրդը սոված է... Նարեկացու, մյուսների անունները մինչեւ օրս չէինք տա, եթե սնունդ չտային մեզ: Մի

հատիկով հարյուրավոր տարիներ կարող ենք ապրել: Չէ՞ որ Չարենցը մինչեւ հիմա Չարենց է: Մի ուրիշն էլ այլեւս պետք չի, որովհետեւ սնունդ չի տվել... Մեկը գետ է. ինչքան ուզում ես ջուր խմիր, էլի կա, էն մյուսը առու է, պրծնում է: Իսկ ես շուտն չի կարող խանգարել թթվածին սովողներին... Նկարիչը, եթե վրձինը վերցնում է ձեռքը եւ արդեն մտածում է, որ այս նկարը վաճառելու, փող է ստանալու... դա չգիտեմ արդեն ինչ կոչեմ:

Դեմք որ զգամ, որ որեւէ մեկին մնան եմ, նույն օրը ինձ կկախեն: Պե՞տք եմ իբրեւ ինչ-որ երկրորդական անձնավորություն: Փոքր արա, բայց քոնը, ոչ թե «իզմ»-երի ենթարկվիր: Քանի որ նկարը նաեւ շահավետ բիզնես է, կարելի է ինչ են նկարում, կարելի է այն է, որ վաճառվի:

Բայց դա մանանա չի, մի պահ է. բիզնես անելուց հետո էլ գումարն էլ կորում-գնում է, հետո էլի է անում...

Վաճառում եք

– Չէ, ո՞ւմ է պետք... Ոչ մեկն իմ նկարների կարիքը չունի, իմանալու՝ ով եմ. նկարներում երեւում է չէ՞ ով եմ: Իմ պահանջը չունեն, տեսարանիկների պահանջ ունեն:

Անդրանիկի, Սմբատ բեկի, Մարտիրոս դայու հանդիպումն եմ նկարել: Քանի-քանի անգամ եմ ցույց տվել տարբեր մարդկանց. ոչ մեկին պետք չի, որ վերցնի որեւէ թանգարանի համար: Բայց մեր, իրենց, բոլորիս պատմությունն է չէ՞: Ես հո չեմ հնարել, պատմական փաստն եմ արձանագրել: Երեք հզոր ֆիգուրներ հանդիպել են Կապանում: Երկար չարչարվել եմ նկարի վրա, բայց ոչ մեկին պետք չի:

Մեկին նկար նվիրեցի, տղան եկավ թե՛ Կամոյան, նկարը էնքան մռայլ էր, դեղին մերկ առա, տարա, մի քիչ քսեցի, լավացավ...

«Այունյաց երկիր» թերթ  
14 ապրիլի 2006թ., N7(98)

Նարեկացուց Ռոբերտ Կամոյանի հետ